ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«27 » մարտի 2020 թ. Գ. Չկալովկա
N 16-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.03.2020 ԹՎԱԿԱՆԻ N4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ավագանու 27.03.2020 թվականի N4 **հերթական** նիստի օրակարգը՝

1. ՀՀ կառավարության 02.07.2009թ. թիվ 732 -Ն որոշմամբ հաստատված Չկալովկա համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում գտնվող 05-075-0106-0014 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. ՀՀ կառավարության 02.07.2009թ. թիվ 732 -Ն որոշմամբ հաստատված Չկալովկա համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում գտնվող 05-075-0004-0017 և 05-075-0206-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերի նպատակային նշանակությունները գյուղատնտեսականից բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունները գյուղատնտեսական այլ հողատեսքից բնակելի կառուսապատման փոխելու մասին:
3. Չկալովկա համայնքի 1-ին, 2-րդ և 4-րդ փողոցների ասֆալտապատման ծրագրին մասնակցելու և ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու թույլտվության մասին:

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«27» մարտի 2020 թ. գ. Չկալովկա

N 17-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 02.07.2009Թ. ԹԻՎ 732 -Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 05-075-0106-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի վրա սպանդանոցի կառուցման համար անհրաժեշտ 0.12 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ Չկալովկա համայնքի բնակիչ Հրաչ Սարգսյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-075-0106-0014 կադաստրային ծածկագրով՝ համայնքի գլխավոր հատակագծով հաստատված գյուղատնտեսական (գործառնական նշանակությունը՝արոտավայր) գուտում համայնքային սեփականություն հանդիսացող 0.12հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի:

2. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնել Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ՝ 3 Դեմ՝0 Ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«27» մարտի 2020 թ. Գ. Չկալովկա

N 18-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 02.07.2009Թ. ԹԻՎ 732 -Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-075-0004-0017 և 05-075-0206-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, ԻՍԿ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՍԱՊԱՏՄԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Կարապետ Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական թիվ 2394336), 0.24 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի մակերեսն ապահովելու վերաբերյալ դիմումը, կից ներկայացված ՀՀ կադաստրի կոմիտեի N Կ-19032020-05-0135 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը (Կարապետ Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի մի մասը՝ 455.4 քմ հանդիսանում է դաշտամիջյան ճանապարհ՝ գյուղ այլ հողատեսք, իսկ 476 քմ հանդիսանում է գյուղ այլ հողատեսք), 024 հա մակերեսն ապահովելու համար վերոնշյալ 2 հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչպես նաև ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-075-0004-0017 կադաստրային ծածկագրով հողամասից 476 քմ և 05-075-0206-0001 կադաստրային ծածկագրով հողամասից **455**.4 քմ մակերեսներով հողակտորների նպատակային նշանակությունները գյուղատնտեսականից փոխել բնակավայրի, իսկ գործառնական նշանակությունները գյուղատնտեսական այլ հողատեսքից փոխել բնակելի կառուսապատման

2. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնել Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ՝ 3 Դեմ՝0 Ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«27» մարտի 2020 թ. Գ. Չկալովկա
N 19-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ, 2-ՐԴ և 4-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ և ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020 թ. ՀՀ բյուջեից համայանքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թուլատրել ներկայացնելու Չկալովկա համայնքի 1-ին, 2-րդ և 4-րդ փողոցների հիմնանորոգում և արդիականացում տնտեսական զարգացման ծրագիրը:
2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել Չկալովկա համայնքի 1-ին, 2-րդ և 4-րդ փողոցների ասֆալտապատում և արդիականացում տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թ. Բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրն իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 27-ից:

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«27» Մարտի 2020 թ. գ. Չկալովկա

N 20-Ա

ՈՐՈՇՈՒՄ

05-075-0142ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՒՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ 8.31585 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-075-0142 ծածկագրով թաղամասում առանձնացնել 8.31585 հա մակերեսով՝ համայնքի գլխավոր հատակագծով հաստատված հանգստի և առողջարանային գուտում գտնվող հողամաս և ճանաչել համայնքային սեփականություն՝ հետագայում օտարելու նպատակով:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ՝ 3 Դեմ՝0 Ձեռնպահ՝ 0

ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ